ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Տրանսպորտի վարչության պետի տեղակալ, տեխնիկական քաղաքականության բաժնի պետ Արման Կարապետյանի և Նախարարության Արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ Վիոլետա Աղաջանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Արման Կարապետյան

Վիոլետա Աղաջանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Տրանսպորտի վարչության պետի տեղակալ, տեխնիկական քաղաքականության բաժնի պետ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2019 թվականի փետրվարի 14-15-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

ՌԴ տրանսպորտի նախարարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության բնագավառում հայ-ռուսական համատեղ հանձնաժողովի նիստին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2019թ. փետրվարի 14–15-ը ք. Մոսկվայում կայացել է Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության բնագավառում հայ-ռուսական համատեղ հանձնաժողովի նիստը, որի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

- ՌԴ և ՀՀ միջև ուղևորափոխադրումների կազմակերպումը,
- ՀՀ և ՌԴ միջև ավտոմոբիլային փոխադրումների իրականացման ընթացքում անվտանգության պահանջների հետևողականությունը,

- Բեռնափոխադրումները երրորդ երկրներից և դեպի երրորդ երկրներ,
- ՀՀ տարածքում ավտոմոբիլային ճանապարհների օգտագործման համար գանձումների վճարման համակարգի ստեղծումը,
- այլ հարցեր:

ՌԴ և ՀՀ միջև ուղևորափոխադրումների հարցի ընթացքում Կողմերը ներկայացրեցին իրենց պետությունում տիրող միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների վիճակը, ինչպես նաև նշեցին, որ երկկողմ ավտոբուսային հաղորդակցության աշխատանքը իրականացվում է՝ ըստ նախկինում ձեռբերված կանոնավոր հաղորդակցության առաջնահերթություն ունեցող զարգացման վերաբերյալ պայմանավորվածության:

Կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում մասնավորապես դրվեց ՀՀ փոխադրողների միակողմանի սպասարկման իրավունք տրամադրելու հարցը՝ հաշվի առնելով ՌԴ փոխադրողների նվազ հետաքրքրությունը դեպի ՀՀ ուղևորափոխադրումների կազմակերպման հարցում, այլապես առաջարկվեց ավելացնել ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման համար տրամադրվող թույլտվությունների չափաքանակը, որոնք ներկա պահին վերջացել են:

Հայկական կողմը տեղեկացրեց, որ ներկայումս մոտ 20 հայկական փոխադրողներին սահմանված կարգով թույլատրվում է իրականացնել Հայաստանի և Ռուսաստանի միջև միջազգային ավտոբուսային ուղևորափոխադրումներ: ՀՀ պատվիրակության կողմից տեղեկացվեց նաև, որ նախապատրաստական աշխատանքներ են տարվում՝ Հայաստանի և Ուկրաինայի միջև Ռուսաստանի տարածքով տարանցմամբ երթուղի ստեղծելու ուղղությամբ: Հավի առնելով վերոգրյալը՝ լրացուցիչ կանոնավոր երթուղիների կազմակերպման համար դիմումները կներկայացվեն ռուսական կողմին:

Ռուսական կողմը նշեց, որ ի լրումն 2018 թվականին համաձայնեցված ՀՀ և ՌԴ միջև չորս կանոնավոր ավտոբուսային երթուղիներին՝ ներկայումս երկու պետությունների իրավասու մարմնների միջև փոխգործակցություն է իրականացվում ևս չորս կանոնավոր երթուղիների կազմակերպման համար: ՌԴ պատվիրակության կողմից շեշտվեց, որ ըստ իրենց ունեցած տեղեկատվության, հայկական փոխադրողների կողմից 2019թ. հունվար ամսվա ընթացքում դեպի Ռուսաստան իրականացվել են 52 փոխադրումներ, որոնց թվում՝ 24 ոչ կանոնավոր փոխադրում և 28 կանոնավոր փոխադրում: Այսպիսով, ևս 4 նոր կանոնավոր ավտոբուսային երթուղիների ավելացումը թույլ կտա զգալիորեն բավարարել ՀՀ և ՌԴ միջև ուղևորափոխադրումների պահանջարկը:

Կողմերը նաև նշեցին, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության խնդրանքով 2018 թվականին հայկական կողմին տրամադրվել են ավելի, քան 1000 ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների համար թույլտվություններ, ընդ որում՝ ռուսական փոխադրողների կողմից նշված ժամանակահատվածում չի օգտագործվել ոչ մի հատ թույլտվություն:

Խոսելով ՀՀ և ՌԴ միջև ավտոմոբիլային փոխադրումների իրականացման ընթացքում անվտանգության պահանջների նկատմամբ հետևողականության մասին՝ ռուսական կողմը ներկայացրեց հայկական փոխադրողների կողմից կատարած խախտումները 2018 թվականին

իրականացված միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ընթացքում: Տեղեկացվել է, որ 2017 թվականի համեմատ խախտումների թիվն ավելացել է, ընդ որում՝ վճարված տուգանքների ծավալը կազմել է 57%:

Հայկական կողմն իր հերթին տեղեկացրեց ՀՀ գործադիր իշխանության մարմիններում կառուցվածքային փոփոխությունների մասին, այդ թվում՝ միասնական տեսչական մարմնի ստեղծման մասին, որի գործարկման մեկնարկից հետո խախտումների մասին հավասարազոր տեղեկատվությունը կտրամադրվի ռուսական կողմին:

Քննարկելով բեռնափոխադրումների իրականացման հարցը երրորդ երկրներից և դեպի երրորդ երկրներ՝ հայկական պատվիրակությունը դիմել է ռուսական պատվիրակությանը 2019 թվականի համար երրորդ երկրներից և դեպի երրորդ երկրներ 800 լրացուցիչ թույլտվությունների տրամադրման խնդրանքով: Ռուսական կողմը խնդրեց ներկայացնել մանրամասն տեղեկատվություն նախկինում վերջիններիս կողմից տրամադրված թույլտվությունների օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև առաջարկեց քննարկել հայկական կողմի դիմումը՝ վերոնշյալ տեղեկատվությունը ստանալուց հետո:

Օրակարգի վերջին հարցի քննարկման ընթացքում ռուսական կողմը ներկայացրեց Ռուսաստանում «Պլատոն» մայրուղիներին անցման համար ներդրված վճարովի համակարգի շահագործման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը: Հայկական կողմին առաջարկվեց ներդնել նմանատիպ համակարգ Հայաստանի Հանրապետությունում:

Որպես լրացուցիչ հարց հայկական պատվիրակության կողմից առաջարկվեց դիտարկել Early one հավելվածի կիրարումը Վերին Լարս սահմանային անցակետում: Ռուսական կողմը նշեց, որ իրեն կողմից նույնպես քննարկվել է այդ հնարավորությունը, և դրա իրականացումը գտնվել է անհնար՝ ելնելով մի շարք խնդրահարույց խոչընդոտներից, մասնավորապես՝ կլիմայական պայմաններից:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պատվիրակությունները փոխանակվեցին կոնտակտային տվյալներով կանոնավոր միջազգային ավտոբուսային երթուղիների կազմակերպման հարցերով փոխգործակցության իրականացման նպատակով:

Ռուսական կողմը առաջարկեց 2019թ. հունիսի 1-ից ոչ ուշ ժամկետում կազմակերպել առանձին հանդիպում ՌԴ և ՀՀ միջև կանոնավոր ավտոբուսային հաղորդակցության զարգացման հարցի քննարկման նպատակով, որին հայկական կողմը հավանություն տվեց:

Ռուսական կողմը համաձայնել է տրամադրել հայկական կողմին ոչ կանոնավոր ուղևորային փոխադրումների իրականացման նպատակով 2019 թվականի համար նախատեսված ևս 150 լրացուցիչ ձևաթղթեր (50 հատ ձևաթղթեր տրամադրվել են 2019թ. հունվարի սկզբին), ընդ որում՝ կայկական կողմը համաձայնել է կատարել հետևյալ պայմանները.

- յուրաքանչյուր ամիս ՌԴ տրանսպորտի նախարարություն ներկայացնել մանրամասն տեղեկատվություն կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների վերաբերյալ,
- աջակցել նոր կանոնավոր ավտոբուսային երթուղիների բացմանը,

- միջոցներ ձեռնարկել պարիտետային հիմունքներով ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման համար,
- ՌԴ տրանսպորտի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն հայկական փոխադրողների կողմից օգտագործված և ՀՀ իրավասու մարմնին հանձնված ոչ կանոնավոր ուղևորային փոխադրումների իրականացման համար ձևաթղթերը,
- ՌԴ տրանսպորտի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն չափանիշերի մասին, որոնց համաձայն հայկական փոխադրողների միջև բաշխվում են ստացված ռուսական թույլտվությունները:

Հայկական կողմը կդիտարկի ռուսական պատվիրակության կողմից ներկայացված առաջարկը Հայաստանում «Պլատոն» մայրուղիներին անցման համար վճարովի համակարգի ներդրման վերաբերյալ և արդյունքների մասին, ինչպես նաև Նախարարությունում տվյալ աշխատանքի կազմակերպման նպատակով նշանակված լիազորված անձի տվյալները կհայտնի վերջինիս:

Հայկական պատվիրակությունը առաջարկեց հաջորդ Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության բնագավառում հայ-ռուսական համատեղ հանձնաժողովի նիստն անցկացնել Հայաստանի Հանրապետությունում: Կողմերը պայմանավորվեցին միջոցառման անցկացման վայրն ու ամսաթվերը համաձայնեցնել աշխատանքային կարգով:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարության տրանսպորտի վարչության պետի տեղակալ,
տեխնիկական քաղաքականության բաժնի պետ՝

Արման Կարապետյան

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության արտաքին
կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ՝

Վիոլետա Աղաջանյան

19.02.2019թ.